ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի
Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմն. դպրոց

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽՈՒՄԲ՝ III

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2 0 2 3 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….…….…….…. 3
Գոյականական անդամի լրացումներ…..... 4
Որոշիչ……..…… 6
Հատկացուցիչ…….……. 11
Բացահայտիչ……..…….. 13
Եզրակացություն…….…… 16
Օգտագործված գրականության ցանկ……..…… 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գոյականական անդամների ուսուցումը **արդիական** նշանակություն ունի, քանի որ նախադասությունը՝ իր լրացումներով, ընկած է շարահյուսության ուսուցման հիմքում: Մեր նպատակն է դիտարկել այն մեթոդներն ու ուղիները, որոնք հնարավորություն կտան առավել դյուրին ու ընկալելի դարձնելու գոյականական անդամների լրացումների ուսուցման գործընթացը: Այսպիսով՝ քերականական ուսուցման նշված ելակետները հաշվի առնելով՝ հետազոտական աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրը՝ նախադասության երկրորդական անդամների, մասնավորապես գոյականական անդամի լրացումների ուսուցման հարցերը: Այս ուղղությամբ աշխատանքը կարևոր արժեք ունի, որովհետև թե՛ հնչյունաբանական, թե՛ ուղղագրական գիտելիքների յուրացումն ու դրանց ուղղությամբ ունակությունների ձևավորումը իրականացվում են շարահյուսական գիտելիքների հիման վրա:Թեմայի արդիականությունը: Քերականական գիտելիքների ուսուցումը, ինչպես նաև լեզվի ուսուցման հարցերն առհասարակ կարևոր տեղ են գրավում հանրակրթական դպրոցում, քանի որ, բացի համապատասխան գիտելիքներ տալուց, զարգացնում են սովորողների լեզվագործածության ունակությունները՝ հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու նպատակով:

Ուսումնասիրության նպատակը: Մեր ուսումնասիրության նպատակն է քննել գոյականական անդամի ուսուցման առանձնահատկությունները: Նշված նպատակից բխում են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել քերականության ուսուցման կարևորությունը,
- վեր հանել լրացումների ուսուցման առանձնահատկությունները,
- բացահայտել գոյականական անդամի լրացումների ուսուցման քայլաշարը,
- դասի օրինակով բացահայտել գոյականական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները:

Նախադասության մեջ, բացի գլխավոր անդամներից՝ ենթակայից և ստորոգյալից, կան երկրորդական անդամներ, որոնք լրացնում են գլխավոր անդամներին կամ էլ միմյանց:

Ինչպես գիտենք, նախադասության այն անդամը, որին լրացնում է երկրորդական անդամը, կոչվում է լրացյալ:

Երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի՝ կախված այն բանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված դրանց լրացյալը՝ գոյականո՞վ, թե՞ բայով:

Ըստ այդմ, լինում են գոյականական անդամի լրացումներ և բայական անդամի լրացումներ:

Որպեսզի աշակերտները կարողանան հեշտությամբ լրացումները տարբերակել, անհրաժեշտ է բառակապակցության և կապակցման եղանակների լավ իմացությունը:

Այնպես որ, լրացումների ուսուցումը բարդ և դժվարին գործընթաց է, որը հիմնվում է հայոց լեզվի մյուս բաժինների իմացության վրա: Եվ եթե աշակերտը տարբերակի գոյականական անդամի լրացումները, ապա հեշտությամբ կսահմանազատի նաև բայական անդամի լրացումները:

Լիակատար կյանքով ապրելու համար մայրենի լեզուն պետք է ոչ միայն սիրել աչքի լույսի պես,այլև իմանալ այն անսխալ,խորապես:

Ստեփան Զորյան

Լեզվի մեջ կան որոշակի միավորներ՝ հնչյուններ, բառեր, որոնք խոսողը գործածում է իր մտքերն արտահայտելիս:

Իսկ նախադասությունն՝ը:

Նախադասություններն այլ կարգի են: Լեզվի մեջ չկան պատրաստի նախադասություններ: Մարդը ինքն է խոսելիս կազմում դրանք: Եվ կազմում է այն կանոններով, որոնք կան լեզվում:

Շարահյուսությունը քերականության մի բաժինն է, որն ուսումնասիրում է բառակապակցությունն ու նախադասությունը, նրանց կազմությունը, տեսակները, կիրառությունները:

Խոսելիս մարդ մեծ մասամբ չի բավարարվում մեկ նախադասությամբ, այլ իր ասելիքն արտահայտում է մեկից ավելի, հաճախ բազմաթիվ նախադասությունների կապակցությամբ՝ կապակցված խոսքով:

Խոսքը լեզվի դրսևորումն է, կիրառությունը, որով արտահայտում ենք մեր մտքերը, զգացմունքները:

Խոսքի մեջ նախադասությունները մտքով, քերականորեն կապված են իրար հետ և հանդես են գալիս կազմության, կիրառության յուրահատկություններով:

Նախադասություններն ըստ կազմության լինում են պարզ և բարդ:

Լրացում ունեցող պարզ նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն:

Լրացումները կարող են ունենալ իրենց լրացումները, որոնք կոչվում են լրացման լրացումներ:

Երկրորդական անդամները բաժանվում են **երկու** խմբի: Մի խումբը լրացնում է նախադասության՝ գոյականով արտահայտված ցանկացած անդամի և կոչվում **գոյականական անդամի լրացումներ** (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ): Մյուս խումբը լրացնում է խոնարհված բայ-ստորոգյալին կամ անկախ դերբայներին և կոչվում է **բայական անդամի լրացումներ** (խնդիրներ և պարագաներ):

Գոյականական անդամի լրացումներ

Աշակերտը պետք է շատ լավ պատկերացնի հետևյալ գծապատկերը. ավելին՝ ցանկալի է յուրաքանչյուր դասարանում ունենալ կամ ձևավորել այն և նմանատիպ այլ գծապատկերներ:



Այսպիսով, գոյականական անդամի լրացումները լինում են երեք տեսակի՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ՝ ցույց տալով որպիսություն, պատկանելություն և ով կամ ինչ լինելը (ամփոփ աղյուսակ, տե՛ս էջ 23-24):

Նախադասության կառուցվածքի մասին գաղափար տալու համար երեխաներին դարձյալ պետք է բաժանել գործողության մեջ գտնվող գոյականներ ներկայացնող տարբեր նկարներ և առաջադրել դրանց շուրջ կազմել նախադասություններ: Այդ նախադասություններում ուսուցչի հանձնարարությամբ երեխաները պիտի գրեն գրատախտակին: Դրանք իրար հետ համեմատելով և հաշվելով նրանց կազմի մեջ մտնող բառերը՝ երեխաները եզրակացնում են, որ նախադասությունները կարող են կազմված լինել տարբեր քանակի բառերից: Հարցերի միջոցով երեխաները համոզվում

են, որ այդ բառերից յուրաքանչյուրն իր տեղն ու դերն ունի նախադասության մեջ. մեկը ցույց է տալիս, թե ով է գործողության կատարողը, մյուսը, թե ինչ գործողություն է կատարվել, երրորդը՝ թե երբ է կատարվել, չորրորդը՝ ինչպիսին է գործողության կատարողը և այլն: Դրանցից յուրաքանչյուրը նախադասությունը կազմող, ամբողջացնող անդամ է: Այնուհետև ուսուցչի օգնությամբ եզրակացնում են. նախադասության կազմի մեջ մտնող բառերը կոչվում են նախադասության անդամներ: Լեզվական այս կանոնի ընկալման

համար մեկ անգամ ևս պետք է կրկնել նախադասության սահմանումը: Նախադասության՝ միտք արտահայտելու գաղափարը ըմբռնել տալու համար պետք է օգտագործել խմբային աշխատանքի հնարը: Դասարանը պետք է բաժանել 4-5 խմբի, յուրաքանչյուր խմբում՝ 3-4 աշակերտ: Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ ծրար, որի մեջ լցված են նախադասության բոլոր բառերը՝ առանձին-առանձին: Հանձնարարվում է ծրարի մեջ եղած բառերը դասավորել այնպես, որ ստացվի նախադասություն: Դրա համար երեխաներն իրենց սեղաններին շարում են բառերը: Խմբերն ուսուցչի հանձնարարությամբ բառերը վերադասավորում են այնպես, որ նախադասությունները լինեն ամբողջական: Նախադասության գլխավոր ու երկրորդական անդամների մասին գաղափար տալու համար երեխաներն իրենց կազմած յուրաքանչյուր նախադասությունից առանձնացնում են նրա բոլոր անդամները, ապա քննարկում են: Ուսուցիչը երեխաներին ուղղորդում է եզրակացնելու, որ նախադասության բոլոր անդամները բաժանվում են երկու խմբի՝ գլխավոր և երկրորդական:

ՈՐՈՇԻՉ

Գոյականական անդամի լրացումներից որոշիչը ավելի հեշտությամբ է յուրացվում աշակերտի կողմից, քան մյուս երկուսը: նախ, կարևոր է, որ աշակերտը ոչ միայն անգիր արածի պես կրկնի կանոնների ձևակերպումը, այլև հասկանա էությունը:

Որոշիչը ցույց է տալիս այն անդամի բնույթը, որակը, չափն ու քանակը, որին լրացնում է, և պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, ո՞րերորդ, քանի՞երորդ, ինչպե նաև՝ ինչի՞ց, ինչո՞վ հարցերին:

Որոշչի լրացյալը կոչվում է որոշյալ :

Աշակերտը պետք է հասկանա, որ որոշյալը նախադասության անդամ չէ, այլ այն բառն է, որին լրացնում է որոշիչը: Որոշյալ կարող են դառնալ նախադասության տարբեր անդամներ՝ ենթական, ստորոգելին, լրացումները:

Օրինակ՝ <<Աշխատանքային փորձը պարտադիր է>> նախադասության մեջ որոշյալի դերում ենթական է, <<Մանեն փոքրիկ աղջիկ է>> նախադասության մեջ որոշյալը ստորոգելին է, իսկ <<Ոսկի քաղաքում մարդիկ չեն աշխատում>> նախադասության մեջ՝ տեղի պարագան և այլն :

Սովորաբար որոշիչը որոշյալի հետ կապակցվում է առդրությամբ, այսինքն՝ ուղիղ ձևով, առանց քերականական փոփոխությունների, իսկ գոյականների թեք հոլովները որոշչի դերում հանդես են գալիս կապակցության խնդրառական եղանակով. . օրինակ՝ փայտից գդալ, սեղանի ժամացույց, թանով ապուր և այլն :

Աշակերտը անպայման պետք է իմանա, թե ինչով կարող է արտահայտվել որոշիչը:

Գոյականը որպես որոշիչ: Գոյականը կարող է հանդես գալ որոշչի շարահյուսական դերով: Աշակերտներին պետք է բացատրել, որ գոյականի ուղղական, սեռական, բացառական և գործիական հոլովները կարող են դառնալ որոշիչ, իսկ տրական, հայցական և ներգոյական հոլովները՝ ոչ: Շատ կարևոր է միտքը հաստատել օրինակներով:

Օրինակ՝ <<Դերասան Հրաչյա Ներսիսյանի խաղը միշտ հիացրել է հանդիսատեսին>> նախադասության մեջ դերասան բառը որոշիչ է և դրված է ուղղական հոլովով:

Հաճախ շփոթություն են առաջացնում սեռականով արտահայտված որոշիչը և հատկացուցիչը: Աշակերտին պետք է բացատրել, որ դրանք կարելի է տարբերել

միայն իմաստային առումներով և հարցադրումներով: Երբեմն այդ լրացումները հստակ սահնամազատված չեն:

Օրինակ՝ <<Սուրճի բաժակը կոտրվեց>> նախադասության մեջ հնարավոր է կատարել երկու հարցադրում՝ ինչի՞ բաժակը և ո՞ր: Նման դեպքում աշակերտը պետք է հարցը տա լրացմանը և իր տված հարցադրումով նշի տեսակը: Աշակերտը մեծամասամբ տալիս է ո՞ր, ինչպրսի՞ հարցերը և ոչ թե ինչի՞, ու՞մ հարցերը:

Օր.՝ <<Այս տղան աղջկա բնավորություն ունի. շուտ է նեղանում>> (ինչպիսի՞, բնավորություն), <<Գինու բաժակները դրված են սեղանին>> (ո՞ր բաժակները):

Ածականը որպես որոշիչ: Աշակերտը պետք է իմանա, որ ածականի շարահյուսական պաշտոնը հիմնականում որոշչի դեր կատարելն է, երբ լրացնում է գոյականին(բային լրացնելիս դառնում է ձևի պարագա):

Բացառականով դրվող որոշիչների մասին խոսելիս պետք է ասել, որ դրանք համարժեք են հարաբերական ածականներին, և կազմել նախադասություններ՝ փոփոխելով բառը:

Օր.՝ Ծղոտից (ծղոտե) գլխարկը պաշտպանում է արևի ճառագայթներից:

Մետաքսից (մետաքսե) շրջազգեստը մի նուրբ հրապույր էր հաղորդում աղջկա դեմքին:

Գործիական հոլովով որոշիչների մասին խոսելիս աշակերտը պետք է ընկալի , որ այն ցույց է տալիս իրի կամ անձի՝ մի բանով օժտված լինելը:

Օր.՝ Ձեռնափայտով ծերունին և ակնոցով երիտասարդը ինչ-որ մեկին էին փնտրում Ս.Գ.:

Թանով ապուրը հաճելի թմբիր բերեց հոգնած ճամփորդներին:

Որոշչի շարահյուսական դերով հանդես են գալիս և՛ որակական, և՛ հարաբերական ածականները: Որակական ածականը որոշչի պաշտոն է կատարում իր երեք՝ դրական, բաղդատական և գերադրական աստիճաններով:

Օր.՝ <<Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում… Վ.Տ>> նախադասության մեջ կարմիր որոշիչն արտահայտված է որակական ածականի դրական աստիճանով (գույները ունեն միայն դրական աստիճան) :

Ծանոթություն. Աշակերտները <<Բառակապակցություն>> բաժնից ծանոթ են կապակցման եղանակներին:

<<Ամեն տեսակ երգ երգեցի-ամենից լավ տաղն է էլի, Սայաթ- Նովի դրախտային, անմահական խա՛ղն է էլի : Ե.Չ>> նախադասության մեջ ամենից լավ որոշիչն արտահայտված է ածականի գերադրական աստիճանով:

<<Ահա բարձրանում է քարե արծիվը…Ա.Բ.>> նախադասության մեջ քարե որոշիչն արտահայտված է հարաբերական դերանունով:

Թվականը որպես որոշիչ: Աշակերտը պետք է իմանա թվականի տեսակները, կարողանա բառակապակցություն կազմել թվականով, որից հետո կարողանա ձևակերպել, որ թվականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս քանակային կամ կարգային հատկանիշ : Հետևաբար, որոշիչ կարող են դառնալ թվականի բոլոր տեսակները :

Օր.՝ Հազար տարով, հազար դարով առաջ կամ ետ, ի՞նչ կա որ…Հ.Թ

Հազար որոշիչն արտահայտված է բացարձակ քանակական թվականով: Գրապահարանի հնգական դարակներում շարված էին հաստափոր գրքերը:

Մեկ քառորդ դրույք ունեմ:

Հնգական որոշիչը արտահայտված է բաշխական քանակական թվականով, իսկ մեկ քառորդը՝ կոտորակային :

Հինգերորդ դասարանը պատրաստվում է միջոցառման:

Առաջին սերը, ինչպես որ հացը,
Ի՞նչ էլ որ անես՝ միշտ կուտ է գնում…Պ.Ս

Հինգերորդ, առաջին որոշիչներն արտահայտված են դասական թվականներով: Թվական որոշիչը և՛ս որոշյալի հետ կապակցվում է առդրությամբ:

Դերանունը որպես որոշիչ: Դերանունը որոշչի պաշտոնում բացատրելիս աշակերտի համար պետք է պարզ լինեն դերանվան տեսակները: Ուշադրությունը պետք է կենտրոնացնել հատկանշային իմաստ ունեցող դերանուններին, որոնք կարող են փոխարինել ածականներին և թվականներին: Անհրաժեշտ է նշել, որ անձնական և փոխադարձ դերանունները, ցուցական դերանունների մի մասը, մյուս դերանունների կազմի մեջ մտնող մի քանի այլ դերանուններ չեն կարող կիրառվել որոշչի պաշտոնում, քանի որ հատկանիշ չեն մատնանշում :

Յուրաքանչյուր դերանուն, որ կատարում է որոշչի դեր, պետք է բացատրել օրինակներով և վերլուծություններով: Աշակերտը, միայն մեխանիկորեն կրկնելով, չի կարող յուրացնել այն:

Հարկավոր է տեսական գիտելիքի հետ մեկտեղել գործնականը: Օր.՝ կազմել նախադասություններ նշված բառակապակցություններով. այս աշխարհը, այսքան գրքեր, ողջ շրջապատը, ուրիշ խնդիրներ, ամեն վայրկյան, ո՞ր երկիրը, ինչքան կյանք, ոչ մի որպե և այլն:

Պետք է նշել, որ ժխտական դերանուններից միայն ոչ մի-ն կարող է կատարել որոշչի դեր:

ՕՐ.՝ Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,

Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա:

Դերբայը որպես որոշիչ: Որոշչի շարահյուսական պաշտոնում կիրառվում են միայն անկախ դերբայները, բացի համակատարից (աշակերտներին պետք է հիշեցնել անկախ դերբայները և ձևաբայերը) :

Անորոշ դերբայը որոշիչ դառնում է միայն բուն սեռականում:

Օր.՝ ,Գրելու թղթով լիքն էր դարակը նախադասության մեջ գրելու որոշիչը դրված է սեռական հոլովով:

Հարակատար դերբայով արտահայտված որոշիչը ցույց է տալիս առարկայի գործողությունից առաջացած հատկանիշ և ունի ածականի գրեթե բոլոր քերականական հատկանիշները: Հարակատար դերբայը որոշիչ դառնում է չհոլովված և որոշյալին կապակցվում առդրությամբ:

Օր.՝ Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա…Ե.Չ.:

Չարտասանված տխուր խոսքեր,

Դուք չեք մեռել, դուք չեք մեռնի… Վ.Տ.

Ենթակայական դերբայը ևս չհոլովված , ուղիղ ձևով է դառնում որոշիչ:

Օր.՝ Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,

Որպես ուրու հալածական, որպես տեսիլ…Ե.Չ.

Մակբայը որպես որոշիչ: ,Մակբայե թեման անցնելիս նշվում է , որ այն դառնում է բայի լրացում: Որոշիչը բացատրելիս անհրաժեշտ է աշակերտին հիշեցնել, նա և նշել, որ բայական արմատով գոյականներին լրացնելիս մակբայը կարող է դառնալ որոշիչ:

Օր.՝ Դանդաղ վազքը (վազելը) առողջարար է:

Վիճակախաղի ամենուրեք վաճառքը (վաճառելը) հետաքրքրություն է առաջացնում:

Որոշիչը կարող է արտահայտվել կապային կառույցներով և դերբայական դարձվածով: Կապային կառույցները աշակերտի կողմից հեշտ են յուրացվում, սակայն դերբայական դարձվածով որոշիչները՝ ոչ, քանի որ նշված թեման սովորում են հաջորդ ուսումնական տարում:

Որոշչի կետադրությունը: Աշակերտը պատկերացում ունի շարադասությունից, այնպես որ դժվար չէ բացատրել, որ որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս:

Առաջադաս որոշիչը որոշյալից չի տրոհվում: Մեկ բառով արտահայտված հետադաս որոշիչը ևս չի տրոհվում :

Օր.՝ Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե…Ե.Չ.:

1	Համասեռ որոշիչները տրոհվում են ստորակետով:	Օրինակ՝ Լեոն իր **մեղմ, բարի** հայացքը հառեց արտասվալից աչքերիս:
2	Եթե որոշիչներից մեկը հարաբերական է մյուսը որակական ածական, ապա դրանք իրարից չեն տրոհվում:	Օրինակ՝ **Որդիական ջերմ** սեր, **ձմեռային ցուրտ** հոսանքներ, **մշտնջենական ծանր** աշխատանք, **հաղթական ուրախ** շքերթ, **մարտական բարձր** պարգև, **հմայիչ բարի** ժպիտ և այլն:
3	Գույն ցույց տվող ածականների հետ դրվող որոշիչները նախընտրելի է չտրոհել:	Օրինակ՝ **Կարմիր անբիծ** շրջազգեստ, **կանաչ նախշավոր** գլխաշոր, **կապտավուն մետաքսե** վարագույր, **փայտե սպիտակավուն** քանոն և այլն:
4	Որոշչի դերբայական դարձվածի և նրան հաջորդող որոշչի միջև ստորակետ չի դրվում:	Օրինակ՝ Սարերից **իջնող հորդառատ** առվակ, աչքից **վրիպած կոպիտ** տառասխալ, պահարանում **թաքցրած եզակի** ձեռագիր և այլն:
5	Դերբայ + ածական որոշչի կապակցությունը չի տրոհվում:	Օրինակ՝ **Հարթեցված գեղեցիկ** ճանապարհ, **չխոսող փոքրիկ** երեխա, **քնած վատառողջ** հիվանդ և այլն:
6	Ածական + դերբայ որոշչային կապակցությունները երբեմն տրոհվում են:	Օրինակ՝ **Գեղեցիկ, առինքնող** դիմագծեր: **Խիտ, մազակալած** ընչացք: **Բարի, ժպտացող** աչքեր և այլն:

Հետադաս կիրառության դեպքում որոշիչ- որոշյալը տրոհվում են բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով: Հատուկ պետք է ընդգծել, որ գեղարվեստական գրականության մեջ, հատկապես չափածոյում հանդիպում ենք որոշիչների ավելի շատ շրջուն, քան սովորական շարադասության դեպքերի:

Օր.՝ Այս ամրոցի օդում՝ մգլահամ ու ճնշող,
Ստվերներ են շրջում օրհասական…Ե.Չ.
Իբրև ծերունի մի թերթավաճառ՝
Հուշիկ քայլերով և համարյա կույր…Ե.Չ.

1	Հետադաս որոշիչը որոշյալից բաժանվում է բութով, իսկ նախադասության մնացած մասից՝ ստորակետով	Օրինակ՝ Բրգաձև բարձրանում էին ժայռերը՝ **խոժոռ և ահռելի,** որոնք զուրկ էին բուսականությունից:
2	Հետադաս որոշիչը չի տրոհվում, եթե արտահայտված է մեկ բառով	Օրինակ՝ Շուտով կլռի աղմուկը **դաժան** Ու սիրտս կզգա քայլետ **փափուկ:**
3	Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է բազմակի որոշիչներով	Օրինակ՝ Բեմում երգում էր մի տարեց կին՝ դեռևս **գեղանի վեհաշուք, հեզաճկուն:**
4	Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է բառակապակցությամբ	Օրինակ՝ Արծվի թևերը՝ **ճերմակ փետուրներով**, վեր ու վար էին անում ամպաքուլա երկնքի հեռուներում:
5	Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է դերբայական դարձվածով	Օրինակ՝ Ձորի եզերքին ավերակ վանքն էր՝ դարերի ցավը պատերին ծեփած:
6	Երբեմն հետադաս որոշիչները իրենց կազմում ունենում են և՛ բառ, և՛ բառակապակցություն, և՛ դերբայական դարձված	Օրինակ՝ գրադարանում շարված էին գրքեր՝ **նրբակազմ, նկարազարդ,** իսկ դրանց վրա մատնահետքերն էին՝ դարերի **լույսը իրենց մեծ** պահած:

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Աշակերտը պետք է իմանա, որ հատկացուցիչը ցույց է տալիս լրացյալի պատկանելությունը, վերաբերությունը, սերումը, ծագումը և պատասխանում է ու՞մ կամ ինչի՞ հարցերին: Հատկացուցիչը դրվում է սեռական հոլովուվ : Նախադասության այն անդամը, որն ունի հատկացուցիչ, կոչվում է հատկացյալ:

Հատկացուցիչն արտահայտվում է գոյականի, գոյականին հարաբերակից դերանվան կամ գոյականաբար գործածված որևէ բառի սեռական հոլովի անորոշ առումով, ինչպես նաև անձնական դերանվան սեռական հոլովով:

Օր.՝ Շենքի ճակատը զարդարված է գունավոր պաստառով:

Ոչ մեկի պատասխանն ինձ չգոհացրեց:

Բոլոր ելույթ ունեցողների խոսքում հուզմունք կար:

Տասնհինգի դիմումն ընդունվեց, իսկ մյուսների խնդրանքը մերժվեց:

Սովորողի միտքը միշտ զբաղված է լինում:

Վախեցածի դեմքը գունատվել էր:

Իմ գերեզմանին դուք չմոտենաք…(Վ.Տ)

Մեր կյանքը դառն է , մեր օրը մութ է …Վ.Տ.

Հարկավոր է նշել, որ անձնական դերանունների առաջին և երկրորդ դենքերի եզակի և հոգնակի թվերով դրված հատկացուցիչները կարող են փոխարինվել ստացական ս և դ հոդերով, որոնք դրվում են հատկացյալների վրա:

Օր.՝ իմ խոսքը-խոսքս, մեր երազանքը-երազանքներս, քո գիրքը-գիրքդ, ձեր սրտերը- սրտներդ:

Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել ս և դ հոդերի՝ դերանունների հետ գործածվող սխալ ձևերից, ինչպես՝ իմ խոսքս(պետք է լինի խոսքս կամ իմ խոսքը) :

Հատկացուցիչ- հատկացյալի կապակցությունը խնդրառությունն է :

Հատկացուցիչի շարադասությունն ու կետադրությունը: Ժամանակակից հայերենում հատկացուցիչը սովորաբար դրվում է հատկացյալից առաջ(աշակերտները օրինակներով համոզվում են դրանում): Սակայն գեղարվեստական ստեղծագործություններում հատկացուցիչները կիրառվում են նաև շրջուն շարադասությամբ:

Օր.՝Հիշում եմ դեմքը՝ քո ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին…(Ե.Չ)

Աշակերտը պետք է իմանա, որ առաջադաս կիրառության դեպքում հատկացուցիչը չի տրոհվում: Տրոհումը կատարվում է միայն այն դեպքում, երբ հատկացուցիչի և հատկացյալի արանքում ընկնում են այլ բառեր կամ բառակապակցություններ:

Օր.՝ Տղայի՝ աղջկա պատուհանին գամված հայացքի մեջ զղջման արտահայտություն կար:

Նարեկա վանքի բակում Վարդավառի՝ սիրաբողբոջ տարփանքով լեցուն տոնախմբություն է :

Հարկավոր է նշել, որ հատկացուցիչի վրա բութ է դրվում, իսկ հատկացյալից առաջ ստորակետ չի դրվում:

.

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Բացահայտիչը գոյականական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը կամ չշգրտում, մասնավորեցնում այն:

Բացահայտիչ ունեցող անդամը կոչվում է բացահայտյալ: Բացահայտիչը պատասխանում է այն հարցերին, ինչ բացահայտյալը:Բացակայտիչը լինում է նախադասության ցանկացած անդամի լրացում:

Աշակերտը պետք է իմանա բացահայտչի երեք տարատեսակները՝բուն, մասնական, մասնավորող պարագայական:

Բուն բացահայտիչ: Աշակերտը պետք է պատկերացնի այս լրացման բոլոր առանձնահատկությունները: Ի տարբերություն նախադասության մյուս անդամների ՝ բուն բացահայտիչն ունի քերականական կայուն ձևավորում՝ կայուն շարադասություն (դրվում է միայն բացահայտյալից հետո), կապակցման եղանակը համաձայնությունն է (համաձայնում է դեմքով, թվով, հոլովով), տրոհումը պարտադիր է. ունի հնչերանգային դադար:

Բուն բացահայտիչը արտահայտվում է գոյականով, գոյականին հարաբերակից դերանունով, անորոշ դերբայով, գոյականաբար գործածված այլ բառով:

Օր.՝ Արարատը՝ հայոց խորհրդանիշը (գոյական), հսկում է հայերի անդորրը:

Գիրքը կտաս աշակերտին՝ նրան (դերանուն), ում ցանկանում ես:

Նա սիրում է զվարճանալ՝ երգել, պարել, ուրախանալ(անորոշ դերբայ):

Անուշին՝ տան աշխատողին (ենթակայական դերբայ), բոլորը վերաբերվում էին հարազատի պես:

Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում , եթե

1..այն սեռական հոլովի անորոշ առումով է. Սա իմ քրոջ՝ Հեղինեի գիրքն է:

2..նրան հաջորդում է կապ. Իմ եղբոր՝ Հայկի մասին խոսում են բոլորը:

3..նրան հաջորդում է օժանդակ բայ կամ հանգույց. Դա Մթնաձորի անտառների ամենագեղեցիկ թռչունը՝ միրհավն է:

4.. Նրան հաջերդում է սաստկական վերաբերական. Երևանը՝ մեր մայրաքաղաքն էլ է գեղեցիկ:

Իհարկե, բացահայտչից հետո ստորակետ չդնելու որոշ դեպքեր էլ կան, սակայն, կարծում եմ, աշակերտին այսքանը բավարար է:

Մասնական բացահայտիչ: Մասնական բացահայտիչը բացահայտյալին միանում որպես կամ իբրև կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը:

Մասնական բացահայտիչը բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում:

Օր.՝ Արամին՝որպես լավ բժշկի , սիրում և հարգում են բոլորը:

Տղան ինչ-որ բան քրթմնջաց՝ իբրև պատասխան;

Մասնական բացահայտիչը իր յուրահատուկ առանձնահատկության շնորհիվ հեշտ է յուրացվում աշակերտի կողմից:

Մասնավորող պարագայական բացահայտիչ: Այս լրացումը ոչ թե պարզապես գոյականական, այլ պարագայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը, երբեմն՝ նաև չափը, ձևը և այլն:

Ընդ որում, բացահայտյալը կարող է արտահայտված լինել պարագայի պաշտոն կատարող գոյականով, դրան հարաբերակից դերանունով կամ գայականաբար գործածված այլ բառով, ինչպես նաև մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով:

Օր.՝ Դաշտում՝ ափամերձ հանդամասում, աշխատում էին գյուղացիները:

Այսօր՝ վաղ առավոտյան, պետք է շարունակեինք ճանապարհը:

Առհասարակ, գոյականական անդամի լրացումները բացատրելիս միայն որոշակի պատկերացում է տրվում պարագայական բացահայտիչի վերաբերյալ, քանի որ այն հանգամանորեն ուսումնասիրվում է , Պարագաներե թեման ուսանելու ժամանակ :

Նախադասության անդամների և նրանց տեսակների մասին ընդհանուր գաղափար տալուց հետո պետք է ձեռնամուխ լինել դրա ամրապնդմանը և նախադասության երկրորդական անդամների այդ երկու տեսակները գործնականորեն միմյանցից տարբերելու կարողության մշակմանը, որը հնարավոր կլինի իրագործել մարզողական, վերլուծական, կիրառական տարաբնույթ վարժությունների միջոցով: Գոյականական անդամի լրացումները տարբերակելու համար երեխաներին պետք է հանձնարարել ինչ-որ ստեղծագործությունից ընտրված նախադասություններից գտնել ու անջատել գոյականական անդամի լրացումները՝ դրանով իսկ արդեն նախադասության երկրորդական անդամներից մեկը զատելով և ուշադրության առարկա դարձնելով:

Դիտարկենք նախադասությունները:

Նա սովորում է երրորդ դասարանում: (Ո՞ր դասարանում է սովորում):

Կարդացի Արամի գիրքը: (Կարդացի ո՞ւմ գիրքը):

Այս և համանման այլ նախադասությունների շուրջ կատարված նախապատրաստական վարժություններից պարզ երևում է, որ ո՞ր հարցին պատասխանող անդամը որոշիչ է, իսկ ո՞ւմ հարցին պատասխանող բառը՝ հատկացուցիչ: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որոշիչը հատկանիշ, քանակ է ցույց տալիս, հատկացուցիչը՝ պատակնելություն և այլն:

Նախադասության անդամների և նրանց տեսակների մասին ընդհանուր գաղափար տալուց հետո պետք է ձեռնամուխ լինել դրա ամրապնդմանը և նախադասության երկրորդական անդամների այդ երկու տեսակները գործնականորեն միմյանցից տարբերելու կարողության մշակմանը, որը հնարավոր կլինի իրագործել մարզողական, վերլուծական, կիրառական տարաբնույթ վարժությունների միջոցով: Գոյականական անդամի լրացումները տարբերակելու համար երեխաներին պետք է հանձնարարել ինչ-որ ստեղծագործությունից ընտրված նախադասություններից գտնել ու անջատել գոյականական անդամի լրացումները՝ դրանով իսկ արդեն նախադասության երկրորդական անդամներից մեկը զատելով և ուշադրության առարկա դարձնելով:

Դիտարկենք նախադասությունները:

Նա սովորում է երրորդ դասարանում: (Ո՞ր դասարանում է սովորում):

Կարդացի Արամի գիրքը: (Կարդացի ո՞ւմ գիրքը):

Այս և համանման այլ նախադասությունների շուրջ կատարված նախապատրաստական վարժություններից պարզ երևում է, որ ո՞ր հարցին պատասխանող անդամը որոշիչ է, իսկ ո՞ւմ հարցին պատասխանող բառը՝ հատկացուցիչ: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որոշիչը հատկանիշ, քանակ է ցույց տալիս, հատկացուցիչը՝ պատակնելություն և այլն:

Գոյականական անդամի լրացումներ

Տեսակը	Ենթատեսակը	Արտահայտությունը	Օրինակ	Հարցերը
Որոշիչ	•	Աձականով	**Խելացի** երեխա	Ինչպիսի՞
		Թվականով	**Երեք** գիրք , **առաջին** դասարան	Քանի՞
		Դերբայով	**Ծաղկած** ծառ, **երգող** աշակերտ	Որքա՞ն
		Դերանունով	**Այսպիսի** տուն, **այսքան** մարդիկ, **այս** փողոցը	Ո՞ր
		Գոյականով	**Տուֆ** քար, **քարի** դար, **փողկապով** երիտասարդ	
		Բառերի կապակցությամբ	**Արամի պես** ընկեր, **հիսուն տարեկանն անց** կին, **շատ հաճելի** հանդիպում	
		Մակբայով	Թշնամու **հանկարծակի հարձակումը** ետ մղվեց: Ավտոմեքենայի **արագ ընթացքը** աստիճանաբար դանդաղեց:	
Հատկացուցիչ		Գոյականով	**Լիլիթի** տետրը, **Ծառի** ճյուղը	Ու՞մ, ինչի՞
	•	Դերանունով	**Իմ** դպրոցը, **բոլորի** աշխատանքը	
		Գոյականաբար	**Երգողի** ձայնը,	

		գործածված բառով	**մեծի** խորհուրդը	
Բացահայտիչ	Բուն բացահայտիչ	Գոյականով	Մենք՝ աշակերտներս, …	Ով՞, ի՞նչ (ու՞մ, ինչի՞ և այլն)
		Դերանունով	Մեր ուսուցիչները՝ **դուք**, …	
		Գոյականաբար գործածված բառով	Նա՝ **ամենափոքրը**, …	
	Մասնական բացահայտիչ	**Որպես, իբրև** կապերով ու հոլովված բառերով	Արամը, **որպես ավագ**, … Արամին, **որպես ավագի**, …	Որպես(իբրև) ի՞նչ, ո՞վ (ինչի՞, ու՞մ և այլն)
	Պարագայական մասնավորող բացահայտիչ	Գոյականով, բառերի կապակցությամբ և այլն	Երևանում, **մատենադարանում**, կայացավ, … Երեկ, **ժամը իններին**,…	Որտե՞ղ, ե՞րբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Գոյականական անդամի լրացումներ>> թեման բավականին բարդ է, և մեծ ջանքեր է պահանջում յուրացնելու համար: Աշակերտը կամա-ակամա կրկնում է նաև <<Ձևաբանություն>> բաժինը, որն էլ ամրապնդում է նրա գիտելիքը՝ ավելի խորացնելով այն:

Թեմայի յուրացումը հնարավորություն է տալիս նախադասությունը վերլուծելիս որոշել գոյականական անդամի լրացումները և հանդիսանում է այն հիմքը, որի վրա պետք է կառուցվի բայական անդամի լրացումների յուրացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան <<Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն>>, Երևան-2003:
2. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան <<Հ.լեզվի մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար>>, Երևան-2016:
3. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան <<Շարահյուսություն>>, Երևան-2009:
4. Ռ. Իշխանյան <<Արդի հայերենի շարահյուսություն>> , Երևան-1986:
5. Ս. Աբրահամյան , Հայոց Լեզու << շարահյուսություն>>, Երևան – 1987: